Հաստատված է Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի
2012 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում

Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

/Բակալավրի կրթական ծրագիր/

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Մանկավարժական պրակտիկան մանկավարժության բակալավրի մասնագիտական կրրթության նախապատրաստման կարևոր մասն է, կրթական գործընթացի և հետագա գործունեության նախապատրաստման ձև: Մանկավարժական պրակտիկան մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման կարևորագույն միջոց է, ապագա մասնագիտական գործունեության նախապայման, որը հնարավորություն է տալիս ուսանողի տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

1.2. Մանկավարժական պրակտիկայի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է համալսարանի պրակտիկայի բաժինը, համապատասխան ֆակուլտետը և մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող ամբիոնը:

1.3.Ուսանողները մանկավարժական պրակտիկան անց է կացվում համապատասխան պրակտիկայի բազա հանդիսացող ուսումնական հաստատություններում:

1.4. Ուսանողների մանկավարժական պրակտիկայի բազաներ կարող են լինել հանրակրթական հաստատությունները, որոնք ունեն բավարար նյութա-տեխնիկական բազա և բարձրակարգ մանկավարժական կադրեր:

1.5. Սույն կանոնակարգով սահմանվում են մանկավարժական պրակտիկայի.

ա/ սկզբունքները,

բ/ նպատակներն ու խնդիրները,

գ/ բովանդակությունը և փուլերը,

դ/ պրակտիկանտ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները:

1. **Ընդհանուր դրույթներ**

1.1. Մանկավարժական պրակտիկան մանկավարժության բակալավրի մասնագիտական կրթության նախապատրաստման կարևոր մասն է, կրթական գործընթացի և հետագա գործունեության նախապատրաստման ձև: Մանկավարժական պրակտիկան մասնագիտական կողմնորոշման և ուղղորդման կարևորագույն միջոց է, ապագա մասնագիտական գործունեության նախապայման, որը հնարավորություն է տալիս ուսանողի տեսական գիտելիքները կիրառել գործնականում:
1.2. Մանկավարժական պրակտիկայի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է համալսարանի պրակտիկայի բաժինը, համապատասխան ֆակուլտետը և մասնագիտական կրթական ծրագրի իրականացումն ապահովող ամբիոնը:
1.3.Ուսանողները մանկավարժական պրակտիկան անց է կացվում համապատասխան պրակտիկայի բազա հանդիսացող ուսումնական հաստատություններում:
1.4. Ուսանողների մանկավարժական պրակտիկայի բազաներ կարող են լինել հանրակրթական հաստատությունները, որոնք ունեն բավարար նյութա-տեխնիկական բազա և բարձրակարգ մանկավարժական կադրեր:
1.5. Սույն կանոնակարգով սահմանվում են մանկավարժական պրակտիկայի.
ա/ սկզբունքները,
բ/ նպատակներն ու խնդիրները,
գ/ բովանդակությունը և փուլերը,
դ/ պրակտիկանտ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները:

2. **Մանկավարժական պրակտիկայի սկզբունքներն են.**
ա/ Կրթական միջավայրի միասնականության սկզբունք,
բ/ Կոմպետենտության սկզբունք ,
գ/ Կրթության հավասար հնարավորությունների ապահովման և մարդասիրության սկզբունք,
դ/ Համագործակցության սկզբունք,
ե/ Ռեֆլեքսիվության սկզբունք,
զ/ Ուսուցանող գնահատման սկզբունք:

3. **Հանրակրթության բնագավառում անցկացվող մանկավարժական պրակտիկայի նպատակը և խնդիրները**
3.1. մանկավարժական պրակտիկայի նպատակը մանկավարժական փորձառությունն ու փորձուսուցումն է:
3.2. մանկավարժական պրակտիկայի խնդիրները.
ա/ մանկավարժական գործունեության նախնական փորձի ձեռքբերում,
բ/ ուսանողների մասնագիտական որակների ձևավորում,
գ/ հանրակրթական դպրոցի պայմաններում հետագա մասնագիտական գործունեության մոդելավորում համալսարանում մասնագիտական դասընթացների ընթացքում ձեռք բերած տեսական, գիտամանկավարժական և գործնական գիտելիքների հիման վրա,

դ/ հիմնական և ավագ դպրոցի մասին ապագա մանկավարժների պատկերացումների ձևավորում,
ե/ ծանոթացում մանկավարժական կոլեկտիվի հետ,
զ/ մասնավոր առարկա դասավանդող մասնագետին անհրաժեշտ մասնագիտական որակների ձևավորում ինքուրույն մանկավարժական գործունեության պայմաններում:
է/ զարգացնել հետաքրքրություն մանկավարժական գործունեության նկատմամբ
ը/ ամրապնդել, խորացնել և գործնականորեն հարստացնել տեսական գիտելիքները, ձևավորել մանկավարժական որոշակի խնդիրների լուծման ժամանակ դրանց գործնական կիրառման հմտություններ,
թ/ ձևավորել մասնագիտական-մանկավարժական հիմնական գիտելիքները կիրառելու հմտութուններ ըստ առարկայի ուսուցչի և դասղեկի մանկա-վարժական գործունեության կազմակերպման ընթացքում,
ժ/ կոնկրետ մանկավարժական գործընթացում կիրառել հոգեբանա-մանկավարժական և ըստ առարկայի տեսական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները.
ի/ ձեռք բերել հանրակրթական դպրոցում դասարանական և արտադասարա-նական աշխատանքներ ծրագրելու, կազմակերպելու, իրականացնելու փորձ,
լ/ ձևավորել ստեղծագործական, հետազոտական մոտեցում մանկավարժական գործունեությանը,
խ/ նպաստել մանկավարժական մասնագիտական որակների նախնական ձևավորմանը (ինքնատիրապետում, հանդուրժողականություն, մանկավարժական տակտ և այլն):

4. Մանկավարժական պրակտիկայի բովանդակությունը և փուլերը:

4.1. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների ձեռքբերած կոմպետենցիաները և դրանց զարգացման գործընթացը սահմանվում են համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերով, պրակտիկայի դասընթացների նկարագրիչներով, պրակտիկայի թղթապանակի կիրառման ընթաղակարգով, այլ փաստաթղթերով.

4.2. Պրակտիկայի փուլերը

ա) 1-ին փուլ՝ “**Ուսումնաճանաչողականպրակտիկա**”, որընախատեսվումէիրականացնելբակալավրիկրթականծրագրիբոլորմանկանարժակ անմասնագիտություններիգծով:

բ) 2-րդ փուլ՝ ՛՛**Կիրառականպրակտիկա**՛՛, որը նախատեսված է դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադասարանական աշխատանքների, տարբեր կրթական ծառայությունների իրականացմանը, ինչպես նաև մանկավարժական գործընթացների և ուսուցչի (դաստիարակի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի) աշխատանքների պլանավորման, ուսուցմանգործընթացի նախագծման և նախապատրաստման աշխատանքներին ծանոթացնելու և մասնակցություն ցուցաբերելու համար:

գ) 3-րդ փուլ՝ **Ամփոփիչ-գնահատող պրակտիկա**, նախատեսվում է կազմակերպել բակալավրի կրթական ծրագրի բոլոր մանակավարժական մասնագիտությունների ավարտական կուրսի առաջին կիսամյակում:

5. **Պրակտիկանտ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները**

Հանրակրթական դպրոցում մանկավարժական պրակտիկայի ընթացքում՝

5.1. ուսանողն իրավունք ունի.

ա/ ծանոթանալ պրակտիկայի ընթացքում բազային դպրոցի ուսումնադաստիարակչական պլաններին, պայմաններին ու հնարավորություններին համապատասխան ինքնուրույն կազմել իր աշխատանքային անհատական պլանը,

բ/ ուսումնա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպման և անցկացման ընթացքում հանդես բերել նախաձեռնություն և ստեղծագործական մոտեցում,

գ/ խորհրդակցել պրակտիկայի ղեկավարի, դպրոցի մասնագետների, խորհրդատուի հետ,

դ/ ինքնուրույն ընտրել դաստիարակչական և արտադասարանական աշխատանքի թեման, տեսակներն ու ձևերը,

ե/ եթե աշխատանքը անբավարար է գնահատվում, դիմել պրակտիկայի ղեկավարին՝ թույլտվություն ստանալու կրկին անցնել պրակտիկան (առանց ուսումնական պարապմունքներից կտրվելու),

զ/ բողոքարկել գնահատականը համալսարանում դրան համաձայն չլինելու դեպքում:

5.2. Ուսանողը պարտավոր է.

ա/ ենթարկվել դպրոցի ներքին կարգուկանոնին, դպրոցի տնօրենի, ուսմասվարի, պրակտիկայի ղեկավարի օրինական կարգադրություններին,

բ/ ուսանողը պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի և դրա արդյունքների համար դպրոցի ուսուցչական կազմի հետ հավասար,

գ/ ուսանողը պարտավոր է հետևել աշխատանքային կարգապահությանը, ամբողջովին կատարել մանկավարժական պրակտիկայի ծրագրով նախատեսված առաջադրանքները, հանգամանորեն նախապատրաստվել դասերի և այլ աշխատանքների անցկացմանը, հաճախել բաց դասերի, մեթոդական պարապմունքների,

դ/ ուսանողը պարտավոր է պրակտիկայի ընթացքում գործունեության բոլոր տեսակների համար (դասերի անցկացում, դասերին հաճախում, դաստիարակչական և զանգվածային միջոցառումների անցկացում, փաստաթղթերի կազմում, օգնություն դպրոցին և այլն) օրական ծախսել նվազագույնը 6 ակադեմիական ժամ: